Տ. ԴԱՆԻԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԸՆՏԸԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ԾԱՂԿԱՁԱՐԴԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(մարտի 24, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Օրհնեալ որ գայ յանուն Տեառն»
(Մատթ. ԻԱ. 9)։

Շատ սիրելի ժողովո՛ւրդ եւ մասնավորաբար սիրելի մանուկնե՛ր, որ հաղորդակից եք այսօր մեր տոնական Պատարագին։ Մենք ձեզ սիրով եւ ուրախությամբ ենք ողջունում։ Բոլորիս համար ակնհայտ է, որ այս Պատարագը տարբերվում է անցած Պատարագներից։ Այսօրվա տոնն իսկապես յուրահատուկ է. ահավասիկ Մեծ պահքի քառասուն օրերն անցան, եւ վարագույրը կրկին բացվեց, այսօր նորից տեսնում ենք մեր Սուրբ Սեղանի գեղեցկությունը, զգում ենք մեր Սուրբ Պատարագի շքեղությունն ու եւս մեկ անգամ ընկալում ենք Մայր Եկեղեցու սրբությունը։ Հավատքի աչքերով կրկին անգամ հիշում ենք մեր Տիրոջ հարությունը եւ հենց այդ հարության սերը քիչ առաջ ողջույնի կերպով հաղորդեցինք միմյանց, եւ այդ սերը, երգելով, խանդավառությամբ ազդարարեց, թե Քրիստոս մեր մեջ հայտնվեց։ Մի քանի րոպե հետո պիտի ստանանք ամենամե՛ծ շնորհը, ամենամե՛ծ պարգեւը, որը մեր Տիրոջ սուրբ մարմինն ու արյունն է, որը կյանք եւ սրբություն է բոլորիս համար։

Սիրելինե՛ր, անցած վեց կիրակիներին շատ-շատերդ մասնակցեցիք Պատարագներին եւ լսեցիք, որ մեր քարոզիչները մի միտք ընդգծեցին. Մեծ պահքը ճամփորդություն է, եւ ահավասիկ մենք անցել ենք այդ երկար ճանապարհը, որն ունի մի քանի կանգառ կամ կայան։ Նախորդ կիրակիներին քարոզիչները բարձրացան խորան եւ ջանացին բացատրել այդ օրերի խորհուրդը, որ ելնելով Սուրբ Գրքից՝ մեզ է հասել Հայ Եկեղեցու հայրապետների, վարդապետների եւ սրբերի միջոցով։ Ամեն կիրակի

իր հավատարիմ պատգամը փոխանցեց մեզ, բայց այսօրվա՝ Ծաղկազարդի մեծ տոնը յուրահատուկ կայան է այդ երկար ճանապարհորդության միջոցին եւ կարեւոր հանգրվան՝ յուրաքանչյուրիս համար։

Այո՛, այսօրվա՝ Ծաղկազարդի տոնը խիստ կարեւոր է մեզ համար, որովհետեւ սրանով բացվում է դուռը մեր հաջորդ՝ ամենակարեւոր կայանի, որն անշուշտ հաջորդ կիրակի տոնվելիք Սուրբ Զատիկն է։ Ով ուշադրությամբ կարդացել է Սուրբ Գիրքը, վստահաբար նկատել է, որ Հիսուս անընդհատ ճանապարհի վրա է, շարունակ ճամփորդում է։ Ավետարանիչները՝ Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը, Հովհաննեսը, բոլորն էլ շեշտում են Հիսուս Քրիստոսի մշտական ընթացքը, ցույց տալիս, որ Նա միշտ մի տեղից մյուս տեղն է ճամփորդում, իսկ երբ ինչ-որ մի տեղում կանգ է առնում, հրաշք է գործում, մի կարեւոր պատգամ է հաղորդում, թերեւս երբեմն հանդիմանում է մեկին, ապա շարունակում է Իր ճամփորդությունը։

Եւ այսօր էլ Հիսուս Քրիստոս ճանապարհին է։ Մատթեոսի Ավետարանի Ի. եւ ԻԱ. գլուխներում կարդում ենք, որ Հիսուս գնաց Երիքով, Երիքովից՝ Բեթանիա, Բեթանիայից՝ Ձիթենյաց լեռ, այնտեղից՝ Երուսաղեմ, եւ քանի որ Ծաղկազարդի բուն ավանդական անունն է Քրիստոսի գալուստը Երուսաղեմ, ուրեմն ահա այսօր Հիսուս քայլում է դեպի Երուսաղեմ։ Բայց ինչո՞ւ Երուսաղեմ։ Որովհետեւ Երուսաղեմը հրեաների սուրբ կենտրոնն է, մայրաքաղաքը, հավատի տունը, եւ իհարկե մեզ՝ քրիստոնյաներիս համար կենտրոնական կայանն է։

Երուսաղեմում Քրիստոսին ծաղրի են ենթարկում, բանտարկում են, չարչարում, խաչում եւ թաղում են։ Եւ օրեր անց Հիսուսը հարություն է առնում։ Աստվածաշնչագետներն ասում են, որ Քրիստոսի ամբողջ կյանքը՝ ծննդից մինչ համբարձում, ենթադրում է երկար ճանապարհ՝ իր մեջ ընդգրկելով բազմաթիվ կայաններ։

Բայց ո՞րն էր Հիսուսի՝ Երուսաղեմ գնալու նպատակը։ Գնաց Երուսաղեմ՝ այդ քաղաքը գրավելո՞ւ, թե՞ իրեն Երուսաղեմի եւ հրեա ժողովրդի արքա հռչակելու համար։ Ո՛չ, քանզի Քրիստոս Թագավորն է ոչ միայն հրեա ժողովրդի, այլեւ բովանդակ աշխարհի, բոլոր ազգերի, ողջ տիեզերքի եւ Աստծու ամբողջ արարչագործության։ Եւ մենք գիտենք, որ այնտեղ ժողովուրդը Նրան ողջունեց մեծ ուրախությամբ ու խանդավառությամբ։

Պետք է ասել, որ Քրիստոս համեստ արտաքին տեսք ուներ, կարելի է ասել՝ փոքր-ինչ անշուք, սակայն հավատավոր ժողովուրդը, որոնց

մեջ կային նաեւ շա՜տ երեխաներ, իրենց մաքուր եւ սուրբ աչքերով տեսան, որ այս խոնարհ մարդն իսկապես աշխարհի Թագավորն է՝ ուղարկված Աստծու կողմից, որպեսզի փրկություն բերի այս աշխարհին, բոլոր մարդկանց, մեղավորներին։ Եւ երբ Նա անցավ, գոչեցին. «Օրհնյալ է Նա, Ով գալիս է Տիրոջ անունով»։

Ի՞նչ է նշանակում Տիրոջ անունով։ Նշանակում է, որ Հիսուս եկել է Աստծու՝ Հոր լիազոր իշխանությամբ։ Աստված Իր Որդուն վստահեց, որ Նա գա եւ Աստծու տնօրինությունը կատարի այս աշխարհում, որպեսզի այն փրկությունը, որ տալիս է Աստված Իր սիրելի ժողովրդին, Հիսուս Ինքը կատարի այստեղ։ Այս աշխարհի մեջ, որպես Մարդ եւ որպես Աստված, Հիսուսն է, որ կատարում է Աստծու կարեւոր առաքելությունը։ Եւ Նա դա իրականացնում է աստվածային իշխանությամբ։ Այսինքն՝ երբ Հիսուս խոսում է, Նրա շուրթերով Աստված է խոսում, երբ Հիսուս հրաման է արձակում, այդ հրամանն ուղղակիորեն տրվում է Աստծուց, երբ Հիսուս հանդիմանում է, հանդիմանությունն Աստծուց է, երբ Հիսուս գործում է, Աստված է գործում։

Այո՛, օրհնյալ է Նա, որ եկել է Տիրոջ անունով։ Ուրեմն այսօր Ծաղկազարդի տոնը վճռական օր է։ Երկու շատ կարեւոր, անվիճելի իրողություն է ներկայացնում այսօրվա տոնը։

Առաջին. ինչպես Հիսուս, այնպես էլ մենք ճանապարհի վրա ենք այս աշխարհում։ Այս երկրավոր կյանքում եւ դրանից հետո մենք նույնպես պետք է հասնենք մեր վերջնակայանին ճիշտ այնպես, ինչպես Մեծ պահքը մեզ տարավ քառասուն օր եւ հասցրեց այսօրվան։ Այս իմաստով Ծաղկազարդը մեզ կտանի Ավագ շաբաթից մինչեւ Սուրբ Զատիկ եւ կուղեկցի այն ճանապարհով, որը մեզ տանում է մինչեւ Քրիստոսի հարություն, որ մեզ հասցնում է ոչ թե հին, այլ նոր Երուսաղեմ։ Մենք ամեն օր պետք է շարժվենք, քայլ առ քայլ պետք է առաջ գնանք, պետք է բազմապատկվի մեր հավատքը, պետք է հասունանանք մեր աստվածճանաչողությամբ, քանզի Աստված մեզ կանչում է՝ ասելով. «Արի՛, ինձ մոտեցիր»։ Մեզնից յուրաքանչյուրն ինքն իրեն պետք է հարց ուղղի. արդյո՞ք ես օրեցօր մոտենում եմ իմ վերջին կայանին, արդյո՞ք ես մի օր կհասնեմ Աստծուն եւ Նրա Արքայությանը, թե՞ ուղղակի կորստյան կմատնվեմ։ Եթե ես այսօր արթնանամ՝ հոգեւոր իմաստով, եւ ինքս ինձ գտնեմ այն նույն վայրում, որտեղ մինչ այդ մեղքերի մեջ էի ընկղմված, կնշանակի, որ ես ոչ մի տեղ չեմ առաջացել։

Ինչպե՞ս պետք է մերձենանք Աստծուն, ինչպե՞ս պետք է բարձրանանք դեպի նոր Երուսաղեմ։ Փոքր, համեստ քայլերով, ճիշտ այնպես, ինչպես Հիսուս Ծաղկազարդի օրը բարձրացավ Երուսաղեմ։ Քրիստոս ձիակառքով եւ զորքի առաջնորդությամբ չէր, որ մտավ Երուսաղեմ, ինչպես մի թագավոր։ Նրա մուտքը պարզ էր եւ անշուք, բայց հավատավոր ժողովուրդը ճանաչեց Նրան, մարդիկ անմիջապես հասկացան, որ այս Թագավորն աշխարհի որեւէ թագավորի նման չէ, քանի որ Նրա շքեղությունն արտաքինից չէ։

Երկրորդ իրողությունը հետեւյալն է. այն ամենը, ինչ մենք անելու լինենք մեր կյանքում, պետք է անենք Տիրոջ անունով, որովհետեւ եթե Աստված մեզ ստեղծեց, նշանակում է, որ մենք այս աշխարհ մտանք Աստծու կամքով եւ Աստծու անվամբ։ Այնպես որ մեր կյանքն այնպիսի ճանապարհ է, որը պահանջում է. այն ամենը, ինչ որ անելու եւ ասելու լինենք ամեն օր, ամեն վայրկյան, ամեն րոպե, հարկ է որ լինի Տիրոջ անունով։ Իմ խոսքերը պետք է Տիրոջ անունով լինեն, իմ գործերը՝ նույնպես։ Մենք՝ քրիստոնյաներս, պարտավոր ենք ապրել այնպես, որ երբ մարդիկ տեսնեն մեզ, ասեն՝ ահավասիկ մի անձ, որ աշխարհ է եկել Տիրոջ անունով, եւ ոչ թե ասեն՝ ահավասիկ այն անձը, որ եկել է իր նպատակների, սեփական անվան եւ անձնական գործերը կատարելու համար։ Ո՛չ, մենք բոլորս էլ եկել ենք Բարձրյալի անունով, եւ մեր ամեն շարժում պետք է լինի Տիրոջ անունով։

Այսօր, սիրելինե՛ր, մենք Երուսաղեմի սահմաններին ենք գտնվում, Սուրբ Ջատկի, Քրիստոսի Հարության սահմաններին ենք, մեր առջեւ տարբեր ճանապարհներ են, եւ մենք պիտի ընտրենք մեր ուղին։ Դրանցից մեկը ոչ մի տեղ չտանող ճանապարհ է։ Մյուս ճանապարհին կարող ենք հանկարծակի կանգ առնել, իսկ շարունակելու համար պետք է վերադառնալ եւ մեր սկզբնակետից վերսկսել ճամփորդությունը։ Մի ուրիշ ճամփա մեզ տանում է դեպի անօրենություն, դեպի մեղք, դեպի ինքնասիրություն եւ ի վերջո՝ դեպի մահ։ Միայն մեկ ճանապարհ կա, սիրելինե՛ր, որ տանում է մեզ դեպի նոր Երուսաղեմ, դեպի Ջատիկ, դեպի Քրիստոսի հարություն, դեպի կյանք, այո՛, դեպի Աստված ու հավիտենական կյանք։ Հիսուս Քրիստոս ասում է. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտությունը եւ կյանքը։ Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ Ինձնով»։

Սիրելինե՛ր, այսօր մենք աղոթում ենք, որ գտնենք այդ ճիշտ ճանապա՛րհը եւ շարժվենք այդ ճանապարհով։ Դա դյուրին չէ այս դժվարին

ժամանակներում, որ մենք ապրում ենք, հեշտ չէ մեր փոքրիկ հայրենիքում, որտեղ այսօր մենք գտնվում ենք։ Ոմանք կարող են պնդել, որ ուժի միջոցով է միայն հնարավոր գտնել մեր ճանապարհը։ Այո՛, երբեմն ունենք դրա կարիքը, բայց, որպես Հայ Եկեղեցու զավակներ, վերջնական ճանապարհը, որ մեզ պետք է առաջնորդի դեպի ավարտակետ, դեպի Երկնային Արքայություն, դա Հիսուս Քրիստոսն է, եւ Ինքն է այդ ճանապարհը։

Աղոթենք, որ իմաստություն ունենանք գտնելու այդ ճանապարհը եւ քաջություն՝ նրանով անսասան քայլելու համար։ Ամենադժվար պայմաններում անգամ շարունակենք մեր ընթացքը, լինենք հետեւորդը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, ինչպես որ մեզնից առաջ եղան բազում սերունդներ։ Մենք կանք այսօր, որպեսզի տոնախմբենք այս տոնը։ Աստված այդ շնորհը, այդ քաջությունը թող պարգեւի մեզ այսօր եւ վաղը եւ այս Ավագ շաբաթ եւ հավիտյանս. ամեն։